

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	4
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	8
4. ՓՈԽԱՐԺԵՔ	9
5. ՀԱՐԿԱՐՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	10
5.1. Բյուջեի եկամուտները	10
5.2. Բյուջեի ծախսերը	11
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	12
5.4. Պետական պարտք	13
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	14
6.1. Գնաճ	14
6.2. Ավանդներ	14
6.3. Վարկեր	15
6.4. Դրամական փոխանցումներ	18
7. ԱՄՓՈՓՈՒՄ	18

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տնտեսական ակտիվության աճի տեմպը զգալիորեն արագացել է սեպտեմբերին՝ հասնելով 10.5%-ի: Տարեսկզբին տնտեսական ակտիվության աճի ցածր տեմպը հիմնականում բացատրվում էր բազայի էֆեկտի ազդեցությամբ, մինչդեռ տարվա երկրորդ կեսը սկսել է բավական բարձր աճերով և նկատվում է տեմպի արագացում: Այս պայմաններում ըստ հունվար-սեպտեմբեր ամիսների տնտեսական ակտիվության ցուցանիշի (ՏԱՑ-ի)՝ աճի տեմպը ևս արագացել է՝ հասնելով 7.6%-ի և հունվար-օգոստոսի համեմատ արագանալով 0.5 տոկոսային կետով:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %¹




2025թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ՏԱՑ-ի աճին շարունակում է ամենամեծ նպաստումն ունենալ ծառայությունների աճը՝ շուրջ 2.4 տոկոսային կետով: Առևտրի և շինարարության ոլորտները նույնպես դրական նպաստում են ունեցել ՏԱՑ-ին՝ համապատասխանաբար 1.5 և 1.0 տոկոսային կետով:

Գյուղատնտեսության ոլորտում նույնպես գրանցվում են դրական զարգացումներ: Հունվար-սեպտեմբեր ամիսներին գյուղատնտեսության աճը կազմել է 6.0%, որը թեև ցածր է հունվար-հունիսի 7.3% աճից, սակայն էականորեն գերազանցում է նախորդ տարվա հունվար-սեպտեմբեր ամիսների աճի տեմպին, որը կազմել էր 1.8%: Գյուղատնտեսության աճը ընթացիկ տարվա հունվար-սեպտեմբերին ընդհանուր ՏԱՑ-ի աճին ունեցել է 0.4 տոկոսային կետով դրական նպաստում:


¹ ՏԱՑ-ի նախորդ ամիսների ամսական աճի ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից, ինչի արդյունքում փոխվել են նաև կուտակային աճի ցուցանիշները:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2025թ. հունվար-սեպտեմբերին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության ոլորտի աճի տեմպերը զգալիորեն արագացել են: 2025թ. սեպտեմբերին արդյունաբերության ոլորտում գրանցվել է 10.1% աճ՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 4.3 տոկոսային կետով: Սակայն կուտակային՝ հունվար-սեպտեմբեր ամիսների ցուցանիշը դեռևս մնում է բացասական՝ կազմելով -5.7%, թեև այն ունի մեղմման միտում (նախորդ ամսվա համեմատ անկման տեմպը մեղմվել է 2.1 տոկոսային կետով):

Արդյունաբերության անկումը 2025թ. հունվար-օգոստոս ամիսներին² հիմնականում պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության 13.2% անկմամբ, որի նպաստումն ընդհանուր արդյունաբերության անկմանը կազմել է 9.3 տոկոսային կետ: Հանքարդյունաբերության ոլորտում նույնպես գրանցվել է անկում, որի չափը կազմել է 0.8% և ընդհանուր արդյունաբերության անկմանը նպաստել է 0.1 տոկոսային կետով: Արդյունաբերությանը դրական նպաստում է ունեցել «էլեկտրականություն, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ենթաոլորտը՝ 1.6 տոկոսային կետով, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաոլորտի նպաստումը շարունակել է լինել գրեթե զրոյական:


Մշակող արդյունաբերության կուտակային՝ հունվար-օգոստոս ամիսների զարգացումները էականորեն չեն տարբերվում նախորդ ամիսների զարգացումներից: Սակայն մշակող արդյունաբերության միտումների փոփոխությունն առավել ակնառու է օգոստոս ամսվա ցուցանիշները նախորդ տարվա օգոստոսի հետ համեմատելիս: Այսպես, մշակող արդյունաբերության աճը օգոստոսին կազմել է 7.3%, որը հիմնականում պայմանավորված է «հիմնական մետաղների արտադրություն» ենթաճյուղի շուրջ 77.1% աճով (որի ծավալները եթե դիտարկենք հունվար-օգոստոսի տվյալներով նվազել է 63.9%-ով և մշակող արդյունաբերությանը նպաստել է -16.5 տոկոսային կետով): Այդ աճի նպաստումը մշակող արդյունաբերությանը կազմել է շուրջ 8.2%: Էական նպաստում է ունեցել նաև «ծխախոտային արտադրատեսակների արտադրություն» ոլորտը, որն օգոստոսին աճել է 17.1%-ով՝ մշակող արդյունաբերությանը նպաստելով 1.8 տոկոսային կետով: Միևնույն ժամանակ, էական բացասական նպաստումներ են գրանցվել «սննդամթերքի արտադրություն» «խմիչքների արտադրություն» և «այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն» ենթաոլորտների գծով՝ համապատասխանաբար -1.7, -1.5 և -0.9 տոկոսային կետ:

Վերոնշյալը ցույց է տալիս, որ մշակող արդյունաբերության ոլորտի աճի վերականգնումը և արագացումը պայմանավորված է հիմնական «հիմնական մետաղների արտադրություն» ենթաոլորտով, որտեղ ինչպես նախկինում նշել ենք, ներառվում էր ոսկու վերաարտահանման գործունեությունից գրանցվող տնտեսական արդյունքը: Սեպտեմբերին արդյունաբերության աճի արագացումը հավանաբար ևս կապված է այս ենթաոլորտի աճով (առավել հստակ հնարավոր կլինի նշել արդյունաբերության՝ ըստ ենթաոլորտների, սեպտեմբեր ամսվա տվյալների հրապարակումից հետո):

² Արդյունաբերության սեպտեմբեր ամսվա տվյալները՝ ըստ ենթաոլորտների, դեռևս չեն հրապարակվել:

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության աճի տեմպը շարունակում է մնալ բարձր: 2025թ. սեպտեմբերին շինարարության աճը կազմել է 22.0%՝ օգոստոսի համեմատ արագանալով 0.9 տոկոսային կետով: Աճի բարձր տեմպերը հիմնականում պայմանավորված են կազմակերպությունների և բնակչության միջոցների հաշվին իրականացվող շինարարության աճով: Հունվար-սեպտեմբեր ամիսներին շինարարության աճը կազմել է 20.7%՝ 0.3 տոկոսային կետով արագանալով հունվար-օգոստոս ամիսների ցուցանիշից:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %³




³ Ծառայությունների նախորդ ամիսների ամսական աճի ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից, ինչի արդյունքում փոխվել են նաև կուտակային աճի ցուցանիշները:

Ծառայությունների ոլորտի աճի տեմպը շարունակում է մնալ ավելի ցածր՝ նախորդ ամիսների համեմատ: Ծառայությունների ոլորտում 2025թ. սեպտեմբերին գրանցվել է 7.9% աճ՝ օգոստոսի համեմատ արագանալով 1.2 տոկոսային կետով: Սակայն վերջինս բավական ցածր է հունվար-հուլիսի միջին աճի տեմպից՝ 10.9%-ից: Հունվար-սեպտեմբեր ամիսների աճը կազմել է 9.9%՝ հունվար-օգոստոսի համեմատ դանդաղելով 0.3 տոկոսային կետով:

Ծառայությունների ոլորտի աճը հունվար-օգոստոս⁴ ամիսների տվյալներով, հիմնականում պայմանավորված է «ֆինանսական և ապահովագրական գործունեություն», ինչպես նաև «տեղեկատվություն և կապ» ենթաօլորտների՝ համապատասխանաբար 14.9% և 18.9% աճերով, որոնց նպաստումները կազմել են 4.6 և 3.3 տոկոսային կետ: Աճին դրական նպաստում են ունեցել նաև մյուս ենթաօլորտները, բացի տրանսպորտային ծառայություններից, որտեղ շարունակել է գրանցվել անկում, որի տեմպն օգոստոսին կազմել է 3.2%՝ ընդհանուր ծառայությունների աճին հակազդելով 0.4 տոկոսային կետով:

1.4. Առևտուր⁵

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %




Առևտրի աճի տեմպը շարունակել է դանդաղել: Առևտրի ոլորտում 2025թ. սեպտեմբերին աճի տեմպն էլ ավելի է դանդաղել՝ հասնելով 0.9%-ի, որը նախորդ ամսվա աճի ցուցանիշից ցածր է 0.8 տոկոսային կետով: Այդ պայմաններում կուտակային աճի տեմպը նույնպես դանդաղել է՝ հասնելով 3.5%-ի:

⁴ Ծառայությունների ոլորտի՝ ըստ ենթաօլորտների սեպտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

⁵ Առևտրի ոլորտի նախորդ ամիսների ամսական աճի ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից, ինչի արդյունքում փոխվել են նաև կուտակային աճի ցուցանիշները:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ⁶

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը, %



Արտահանման ցուցանիշները շարունակում են մնալ բացասական տիրույթում: Արտահանման անկումը ընթացիկ տարվա սեպտեմբերին կազմել է շուրջ 24.4%, որը թեև էականորեն ավելի փոքր է օգոստոսի անկումից, սակայն գերազանցում է բարելավման միտումներով աչքի ընկնող մայիս-հուլիս ամիսների միջին ցուցանիշին: Կուտակային անկման ցուցանիշը կազմել է 46.8%՝ հունվար-օգոստոսի համեմատ բարելավվելով 2.0 տոկոսային կետով: Այնուամենայնիվ, արտահանման անկումը շարունակում է բավական խորը լինել:

Արտահանման անկումը, ըստ հունվար-օգոստոս ամիսների ցուցանիշների⁷, ինչպես և ընթացիկ տարվա նախորդ ամիսներին, առավելապես պայմանավորված է «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի (դա հենց ոսկու վերաարտահանումն արտացոլող ապրանքախումբն է) արտահանման շուրջ 75.8% նվազմամբ, որի նպաստումն ընդհանուր արտահանման նվազմանը կազմել է 50.8 տոկոսային կետ: Միևնույն ժամանակ, արտահանման անկմանը էական բացասական նպաստում են ունեցել նաև «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «մանածագործական իրեր» ապրանքախմբերը, որոնց ընդհանուր բացասական նպաստումը կազմել է շուրջ 1.35 տոկոսային կետ:


⁶ Արտահանման և ներմուծման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:

⁷ Արտահանման օգոստոս ամսվա՝ ըստ ապրանքատեսակների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

Արտահանմանը դրական նպաստում ունեցած ապրանքախմբերից նշանակալի է եղել «պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի արտահանման 28.8% աճը, որի նպաստումն ընդհանուր արտահանման աճին կազմել է 1.7 տոկոսային կետ: 0.5-ական տոկոսային կետով դրական նպաստում են ունեցել նաև «բուսական ծագման արտադրանք» և «սարքեր և ապարատներ» ապրանքախմբերի արտահանման ծավալների աճերը: Մնացած ապրանքախմբերի նպաստումներն արտահանման աճին բավական փոքր են եղել:

Եթե արտահանման աճը ճշգրտենք «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի նպաստման չափով (չեզոքացնենք վերաարտահանման ազդեցության զգալի մասը), ապա աճը կկազմի ընդամենը 1.9%՝ շուրջ 0.6 տոկոսային կետով ավելի ցածր, քան նախորդ ամիս: Այսինքն՝ առանց բազայի էֆեկտի, արտահանման աճն այդչափ ցածր է: Այս պատկերը խոսում է վերջին տարիներին արտահանման պոտենցիալի կորստի մասին:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը, %



Ներմուծման անկման տեմպը նույնպես մնում է բավական խորը: 2025թ. սեպտեմբերին ներմուծումը նվազել է 19.5%-ով՝ նախորդ ամսվա համեմատ բարելավելով 7.8 տոկոսային կետով: Հունվար-սեպտեմբեր ամիսների ներմուծման կուտակային նվազումը կազմել է 33.4%:

Ներմուծման անկումը, ըստ հունվար-օգոստոս ամիսների ցուցանիշների⁸, առավելապես պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր,

⁸ Ներմուծման սեպտեմբեր ամսվա՝ ըստ ապրանքատեսակների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ներմուծման շուրջ 77.5% նվազմամբ, որի բացասական նպաստումը կազմել է 38.6 տոկոսային կետ:


Ներմուծման աճին դրական նպաստում ունեցող ապրանքախմբերից առավել նշանակալի են եղել «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» և «պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերի դրական նպաստումները, որոնք կազմել են համապատասխանաբար 1.0 և 0.8 տոկոսային կետ:

Եթե հաշվի չառնենք ոսկու վերաարտահանման ծավալների փոփոխության ազդեցությունները, ապա ներմուծման աճը հունվար-օգոստոսին կլինի դրական, սակայն բավական ցածր՝ 3.8%-ի չափ:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ⁹

Անվանական աշխատավարձերի աճի տեմպերը փոքր-ինչ դանդաղել են: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2025 թվականի հունվար-օգոստոս ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 5.5%-ով (նախորդ ամսվա համեմատ դանդաղել է 0.2 տոկոսային կետով)՝ կազմելով 295,933 դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձը նույնպես աճել է 5.5%-ով (հունվար-հուլիսի աճը՝ 5.6%)՝ կազմելով 322,223 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է ավելի ցածր տեմպով՝ 4.9%-ով (նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 0.2 տոկոսային կետով)՝ կազմելով 227,791 դրամ:

Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2024-2025թթ. հունվար-օգոստոսին, %



⁹ Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, սեպտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (% , աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)



2025թ. սեպտեմբերին ՀՀ դրամի անվանական փոխարժեքը շարունակել է բավական կայուն մնալ նախորդ ամսվա համեմատ: Սեպտեմբերին ԱՄՆ դրամի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը կազմել է 383 դրամ՝ նախորդ ամսվա համեմատ մնալով նույն մակարդակում: ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը փոքր-ինչ արժևորվել է՝ կազմելով 4.6 դրամ՝ նախորդ ամսվա 4.8 դրամի փոխարեն: Եվրոյի նկատմամբ ՀՀ դրամը սեպտեմբերին որոշակիորեն արժեզրկվել է՝ կազմելով միջինում 449 դրամ՝ հուլիսի 446-ի համեմատ:


Եթե համեմատենք նախորդ տարվա նույն ամիսների հետ, ապա ՀՀ դրամը հունվար-սեպտեմբեր ամիսներին արժևորված է եղել ԱՄՆ դոլարի նկատմամբ՝ 1.2%-ով, իսկ եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ արժեզրկվել է՝ համապատասխանաբար շուրջ 1.6%-ով և 5.3%-ով:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճի տեմպը շարունակել է դանդաղել: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճը սեպտեմբերին կազմել է 8.7%՝ օգոստոսի համեմատ դանդաղելով 2.1 տոկոսային կետով, իսկ հունվար-սեպտեմբեր ամիսների աճը կազմել է 14.3%՝ դանդաղելով 0.8 տոկոսային կետով: Բյուջեի այլ եկամուտները (ոչ հարկային) հունվար-սեպտեմբերին աճել են 34.5%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհները շարունակել են անկում գրանցել, որի չափը կազմել է 61.3%:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների աճը հունվար-սեպտեմբերին նույնպես դանդաղել է՝ կազմելով 13.9%՝ հունվար-օգոստոսի 14.3%-ի համեմատ: Հարկային եկամուտների աճին ամենամեծ նպաստումն ունեցած հարկատեսակներն են՝ ԱԱՀ-ն (աճը՝ 24.1%), շահութահարկը (աճը՝ 18.4%) և եկամտային հարկը (աճը՝ 10.1%), որոնց նպաստումներն ընդհանուր հարկային եկամուտների աճին կազմել են համապատասխանաբար 7.2, 3.0 և 2.8 տոկոսային կետ:

Պետական բյուջեով հաստատված պլանի համեմատ, ընթացիկ տարվա ինն ամիսների ցուցանիշներով, բյուջեի ընդհանուր եկամուտները գերակատարվել են շուրջ 48.8 մլրդ դրամով կամ 2.3%-ով, իսկ հարկային եկամուտները՝ 13.4 մլրդ դրամով կամ 0.7%-ով: Այլ եկամուտները գերակատարվել են 38.1 մլրդ դրամով, իսկ


պաշտոնական դրամաշնորհները թերակատարվել են 2.7 մլրդ դրամով կամ 35.2%-ով:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2024թ. Հունվար-սեպտեմբեր		2025թ. Հունվար-սեպտեմբեր	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	6.8	6.8	13.9	13.9
Ավելացված արժեքի հարկ	-2.3	-0.8	24.1	7.2
Ակցիզային հարկ	0.2	0.0	13.7	0.7
Շահութահարկ	5.0	0.8	18.4	3.0
Պետական տուրք	20.9	0.6	15.4	0.5
Մաքսատուրք	1.4	0.0	-1.2	0.0
Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	79.4	2.0	-34.5	-1.5
Այլ հարկեր	12.2	0.4	-2.9	-0.1
Շրջանառության հարկ	17.0	0.4	28.2	0.7
Եկամտային հարկ	10.0	2.7	10.1	2.8
Սոցիալական վճարումներ	15.0	0.6	13.3	0.6

5.2. Բյուջեի ծախսերը

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Պետական բյուջեի ծախսերը թերակատարվել են: Ընդհանուր ծախսերը 2025թ. սեպտեմբերին աճել են 22.9%-ով՝ հիմնականում պայմանավորված կապիտալ ծախսերի (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի) 79.5% աճով:

Հունվար-սեպտեմբեր ամիսներին ընդհանուր ծախսերի աճը կազմել է 14.1% (նախորդ ամսվա համեմատ արագանալով 1.2 տոկոսային կետով), որին ընթացիկ ծախսերի աճի նպաստումը կազմել է 6.5 (աճը՝ 7.7%), իսկ կապիտալ ծախսերինը՝ 7.1 տոկոսային կետ (աճը՝ 45.5%) (ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը ընդհանուր ծախսերի աճին նպաստել են 0.4 տոկոսային կետով):

Ծախսերի կատարողականն էականորեն տարբերվում է եկամուտների կատարողականից: Մասնավորապես, ընդհանուր ծախսերը թերակատարվել են 333.9 մլրդ դրամով կամ 13.1%-ով, իսկ կապիտալ ծախսերը՝ 153.8 մլրդ դրամով, կամ 25.9%-ով: Այսինքն՝ չնայած նախորդ տարվա համեմատ կապիտալ ծախսերի ծավալի աճին, դրանց կատարողականը շարունակում է բավական ցածր մնալ:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը -), մլրդ դրամ



Բյուջեի պակասուրդը շարունակել է աճել սեպտեմբերին: 2025թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ձևավորվել է պետական բյուջեի շուրջ 79.9 մլրդ դրամի չափով պակասուրդ՝ շուրջ 9.5%-ով (կամ 6.9 մլրդ դրամով)՝ մեծ լինելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից:


Ըստ պետական բյուջեի պլանի՝ ինն ամիսների համար պլանավորված պակասուրդի մակարդակը կազմում է 462.6 մլրդ դրամ, ինչը նշանակում է, որ փաստացի պակասուրդը շուրջ 382.7 մլրդ դրամով շեղվել է պլանավորված ցուցանիշից: Վերջինիս հիմնական պատճառը ծախսերի թերակատարումն է:

5.4. Պետական պարտք

2025թ. սեպտեմբերի վերջի դրությամբ պարտքի աճի տեմպը որոշակի արագացել է: ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ նախորդ տարվա սեպտեմբերի համեմատ աճել է 13.6%-ով (նախորդ ամսվա աճը՝ 13.4%)՝ կազմելով շուրջ 14.2 մլրդ ԱՄՆ դոլար: Նույն ժամանակահատվածում կառավարության պարտքն աճել է 14.1%-ով (նախորդ ամսվա աճը՝ 13.9%)՝ կազմելով 13.7 մլրդ ԱՄՆ դոլար: Ընդ որում, կառավարության պարտքի բաղադրիչներից ներքին պարտքը (դրամական արտահայտությամբ) աճել է 16.1%-ով, իսկ արտաքին պարտքը (դոլարային արտահայտությամբ)՝ 10.5%-ով:

Պետական գանձապետական պարտատոմսերի տոկոսադրույքները ունեցել են նվազման միտում: Պետական կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը (տոկոսադրույքը) 2025թ. սեպտեմբերին կազմել է 8.0%՝ նախորդ ամսվա համեմատ նվազելով 0.1 տոկոսային կետով, իսկ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ՝ 1.1 տոկոսային կետով: Միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը սեպտեմբերին կազմել է 9.25%՝ նախորդ ամսվա համեմատ նվազելով 0.4 տոկոսային կետով, իսկ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ՝ 0.7 տոկոսային կետով:


Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ


Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



Գնաճի տեմպը պահպանվում է ցածր մակարդակում, թեև վերջին ամիսներին նկատվում է չափավոր արագացում: 2025թ. սեպտեմբերին 12-ամսյա գնաճի տեմպը կազմել է 3.7%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 0.1 տոկոսային կետով: Այն գտնվում է կենտրոնական բանկի համար սահմանված նոր՝ $3 \pm 1\%$ թիրախային միջակայքում: Այս պայմաններում, ԿԲ-ն վերաֆինանսավորման տոկոսադրույքը սեպտեմբերին ևս պահպանել է անփոփոխ մակարդակում:

6.2. Ավանդներ


Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



Ավանդների աճի տեմպը տատանողական է վերջին ամիսներին, սակայն ընդհանուր առմամբ պահպանվում է բարձր մակարդակում: Ավանդների

ընդհանուր ծավալը 2025թ. սեպտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 16.1%-ով՝ արագանալով 0.3 տոկոսային կետով: Աճը պայմանավորված է եղել ինչպես ռեզիդենտներից, այնպես էլ ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների աճերով՝ համապատասխանաբար 16.5% և 14.8%:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




2025թ. սեպտեմբերին ավանդների աճը մեծամասամբ պայմանավորված է եղել տնային տնտեսություններից ներգրավված ավանդների աճով, որի նպաստումը կազմել է 7.1 տոկոսային կետ: Տնտեսության մյուս հատվածներից ներգրավված ավանդների ծավալները նույնպես դրական են նպաստել ընդհանուր ավանդների աճին:


6.3. Վարկեր

Վարկերի աճի տեմպը պահպանվում է բարձր մակարդակում: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը 2025թ. սեպտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 26.6%-ով (նախորդ ամսվա համեմատ նույն չափով)՝ պայմանավորված ռեզիդենտներին տրամադրված վարկերի 27.2% աճով: Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալը նույնպես աճել է՝ 11.4%-ով:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %




Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի կազմում իրավաբանական անձանց վարկերն աճել են 28.6%-ով, իսկ տնային տնտեսություններին տրամադրված վարկերը՝ 25.7%-ով: Վերջիններիս նպաստումները կազմել են համապատասխանաբար՝ 14.4 և 12.8 տոկոսային կետ:

Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ¹⁰




2025թ. սեպտեմբերին բոլոր ոլորտներին տրամադրված վարկերն աճել են՝ դրականորեն նպաստելով վարկերի ընդհանուր ծավալի աճին: Առավել նշանակալի են եղել սպառողական (աճը՝ 31.1%) և հիպոթեքային (աճը՝ 24.5%) վարկերի աճերը: Վերջիններս ընդհանուր վարկերի աճին նպաստել են համապատասխանաբար 6.9 և 5.4 տոկոսային կետով:

¹⁰ Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 21. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը, մլն ԱՄՆ դոլար¹¹



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը) հուլիս-օգոստոս ամիսներին աճել է: Դրամական միջոցների զուտ ներհոսքը 2025թ. օգոստոսին կազմել է 172.7 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ ամսվա համեմատ աճելով 43.7 մլն դոլարով: Արդյունքում, հունվար-օգոստոս ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ դրամական միջոցների զուտ ներհոսքն աճել է 12.5%-ով՝ կազմելով 889.3 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ամիսների 790.7 մլն ԱՄՆ դոլարի համեմատ:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. Տնտեսական ակտիվության աճի տեմպը վերջին ամիսներին արագանում է, սակայն աճի կառուցվածքը խնդրահարույց է: Սեպտեմբերին ՏԱՑ-ը կազմել է 10.5%՝ օգոստոսի համեմատ արագանալով 3.0 տոկոսային կետով, իսկ հունվար-սեպտեմբեր ամիսների կուտակային ցուցանիշը կազմել է 7.6%: Աճի արագացումը հիմնականում պայմանավորված է արդյունաբերության ոլորտի վերականգնմամբ, որտեղ ևս արձանագրվել է աճի տեմպի արագացում (սեպտեմբերին գրանցվել է 10.1% աճ, իսկ օգոստոսին՝ 5.8%): Միևնույն ժամանակ, եթե ուսումնասիրում ենք արդյունաբերության՝ օգոստոս ամսվա աճի կառուցվածքը, ապա պարզ է դառնում, որ այն առավելապես պայմանավորված է «հիմնական մետաղների արտադրություն» ենթաճյուղի շուրջ 77.1% աճով (որի ծավալները հունվար-

¹¹ Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկրի կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով:
2025թ. սեպտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

օգոստոսի տվյալներով նվազել են): Վերջինս նախորդ տարիներին ուներ բավական բարձր աճի տեմպ՝ ոսկու վերաարտահանման գործարքներով պայմանավորված: Ընթացիկ տարվա ցուցանիշները ևս պայմանավորված են ոչ կայուն գործոններով:

2. Արտահանման անկման տեմպը շարունակում է մնալ բավական խորը՝ բացասական տիրույթում: Արտահանման անկման տեմպը հունվար-սեպտեմբեր ամիսներին կազմել է -46.8%: Ընդ որում, վերաարտահանման հիմնական ազդեցությունները հաշվարկներից չեզոքացնելու դեպքում արտահանման աճը, թեև դառնում է դրական, սակայն մնում է շատ ցածր մակարդակում և դրսևորում է նվազման միտում՝ հունվար-օգոստոսին կազմելով 1.9%՝ հունվար-հուլիսի համեմատ նվազելով շուրջ 0.6 տոկոսային կետով:

3. Պետական բյուջեի ցուցանիշներն էականորեն շեղվել են պլանավորվածից: Չնայած պետական բյուջեի եկամուտների մասով հունվար-սեպտեմբերին արձանագրվել է գերակատարում, բյուջեի ծախսային հատվածն էականորեն շեղվել է պլանից: Մասնավորապես, բյուջեի ընդհանուր ծախսերը թերակատարվել են 13.1%-ով, որում կապիտալ ծախսերը՝ 25.9%-ով: Այդ պայմաններում էականորեն թերակատարվել է նաև բյուջեի պակասուրդը՝ պլանավորված 462.6 մլրդ դրամի փոխարեն կազմելով 79.9 մլրդ դրամ և թերակատարվելով շուրջ 382.7 մլրդ դրամով: Կապիտալ ծախսերը թերակատարվել են 153.8 մլրդ դրամով կամ 25.9%-ով: Այսինքն՝ չնայած նախորդ տարվա համեմատ կապիտալ ծախսերի ծավալի աճին, դրանց կատարողականը շարունակում է բավական ցածր մնալ:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: